# Կողես

**Մակերես՝** 1219.0 հակմ$^2$

**Բնակչություն՝** 355

Տնային տնտեսությունների թիվը՝ 102
Գյուղը գտնվում է Ստեփանավան քաղաքից 17կմ հարավ-արևելք, հեռավորությունը մարզկենտրոնից 52կմ:
Գյուղում և շրջակայքում պահպանվել են քառակող կոթող (VIդ.), եկեղեցի (XIդ.), գերեզմաններ խաչքարերով (XII-XIIIդդ.), կամուրջ (XIIIդ.), Տուտիկ իշխանի կառուցած հուշակոթողը (1241թ.):
Տնտեսությունը՝ զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությամբ:
Համայքնում գործում է քարարդյունահանող մեկ ձեռնարկություն:
ՈՒՆի հիմնական դպրոց՝ աշակերտների թիվը 53, ակումբ, գրադարան, բուժկայան: Ներկայումս իրականացվում են համայնքի գազաֆիկացման աշխատանքները:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կաևորվում են միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգում (Ստեփանավան-Ալավերդի հանրապետական նշանակության ճանապարհի Ագարակ-Ալավերդի հատվածը), դպրոցի մարզադահլիճի կառուցում, ինքնահոս ջրամատակարարման ցանցի գործարկում: